


2009

թվական

«ԿԱՊԻՏԱԼ
ԻՆՎԵՍՏՄԵՆՏՆԹՄ» ՓԲԸ



Կապիտալ
ինվեստմենթս

ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը կազմված է «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից և սահմանում է ընկերության կողմից կիրառվող պատվերների կատարման քաղաքականությունը: Սույն փաստաթուղթը մատչելի է ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում (www.capital.com.am), ինչպես նաև կարող է ձեռք բերվել ընկերության գրասենյակում (ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 27, գրասենյակ 14, աշխատանքային ժամերը երկուշաբթի-ուրբաթ 9:00-18:00):

«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը սահմանում է «Կապիտալ Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ներդրումային ընկերություն) պատվերների կատարման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն): Սույն Քաղաքականությունը հիմնված է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները Կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշման վրա:

Կարգավորման առարկա և լավագույն պայմաններով պատվերների կատարումը

Լավագույն պայմաններով պատվերների կատարման պարտականությունը կիրառվում է, ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում: Այդ պարտականությունը ներառում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր արժեթղթերով գործառնություններ կատարելիս: Այդ պարտականությունն Ներդրումային ընկերության համար ենթադրում է Քաղաքականության կիրառման միջոցով Հաճախորդների համար լավագույն արդյունքի ձեռքբերումը:

Սույն Քաղաքականությունը ապահովում է իրավական և ոլորտի լավագույն մեխանիզմների կիրառումը ինչպես «լավագույն» եզրույթը մեկնաբանելու, այնպես էլ պատվերների կատարման վայրը ընտրելու ժամանակ:

Կատարման գործոնները

Պատվերներ կատարելիս Ներդրումային ընկերությունը հաշվի է առնում պատվերների կատարման բազմաթիվ գործոններ և ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները լավագույն արդյունք ապահովելու իր հաճախորդների համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր գործիքների շուկաներում շեշտը դրվում է գործարքների տարբեր գործոնների վրա՝ ստորև ներկայացված ցանկը սահմանում է այն գործոնները, որոնցից ելնելով Ներդրումային ընկերությունը վերլուծում է գործարքի լավագույն պայմաններով կատարելու աստիճանը:

Ներդրումային ընկերությունը լավագույն պայմաններով կատարումը դիտարկում է որպես մեկ ամբողջություն, որը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական գործոնները: Ի հավելումն, Ներդրումային ընկերությունը դիտարկում է պատվերների կատարման բոլոր հնարավոր վայրերը որպես պատվերների կատարման էական գործոն: Օգտագործելով ոլորտում առկա փորձը, շուկաներում մատչելի տեղեկատվությունը՝ Ներդրումային ընկերությունը սահմանում է բոլոր գործոնների հարաբերական կարևորությունը լավագույն պայմաններով պատվերի կատարումն ապահովելու համար: Այս մեխանիզմը կիրառվում է գործիքների բոլոր տեսակներով գործարքներ կատարելիս:

Կատարման գործոնները ներառում են (սակայն չեն սահմանափակվում) հետևյալ գործոնները՝

- (ա) գինը,
- (բ) գործարքի կատարման համար գանձվող միջնորդավճարները,
- (գ) համապատասխան գործիքի ներկա իրացվելիությունը,
- (դ) պատվերի չափը և բնույթը,
- (ե) գործարքի ազդեցությունը շուկայի վրա,
- (զ) պատվերի կատարման որակը,
- (է) կատարման հնարավորությունը,
- (ը) մյուս կողմի ֆինանսական վիճակը, պատասխանատվությունը և վճարունակությունը,
- (թ) բրոքերի կամ վայրի համապատասխանությունը,
- (ժ) գործարքի կատարումից հետո վերջնահաշվարկի որակը և արդյունավետությունը:

Կատարման վայրերը

Գործարքների կատարման վայրերը սահմանափակվում են այն վայրերով, որոնք կարգավորվում են և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կամ օտարերկրյա պետության արժեթղթերի շուկան կարգավորող և վերահսկող պետական մարմինների կողմից: Ներդրումային ընկերության կողմից ընտրվող վայրերը դիտարկվում են որպես առևտրային գաղտնիք և այդ պատճառով էլ սույն Քաղաքականության մաս չեն կազմում: Պատվերների կատարման վայրերի ցանկը պարբերաբար վերանայվում են Ներդրումային ընկերության կողմից (հաշվի առնելով շուկայում առկա ֆինանսական գործիքների ցանկը) և տրամադրվում են Հաճախորդին՝ վերջինիս գրավոր պահանջի հիման վրա: Ներդրումային ընկերությունը վերապահում է այլ վայր ընտրելու իրավունքը՝ հաշվի առնելով սույն Քաղաքականությունը և Ներդրումային ընկերության կողմից ընդունված պատվերների կատարման վայրերը: Վայրեր ընտրելիս Ներդրումային ընկերությունը հաշվի է առնում պատվերների կատարման հնարավոր վայրերի Ներդրումային ընկերության համար պատվերների լավագույն պայմաններով կատարման համակարգերի հազեցվածությունը:

Հաճախորդի գրավոր ցուցումները

Ներդրումային ընկերությունը Հաճախորդների պատվերները կատարվում են հետևելով նրա ուղղակի ցուցումները: Այդ գործարքները կարող են չապահովել Ներդրումային ընկերության տեսանկյունից լավագույն արդյունք, սակայն կդիտարկվեն որպես Հաճախորդի անկնկալիքները առավելագույնս ապահովող և հետևաբար դիտարկվում են որպես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանող:

Հաճախորդների պատվերների համախմբումը

Ներդրումային ընկերությունը ունի Հաճախորդների պատվերների համախմբման քաղաքականություն: Քաղաքականության կարևորագույն պահանջներից մեկն այն է, որ Ներդրումային ընկերությունը կարող է համախմբել իր հաճախորդի պատվերը կամ իր հաշվին կատավորող գործարքն իր մեկ այլ հաճախորդի պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

- (ա) որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե պատվերը կատարվեր առանձին,
- (բ) ընդհանուր առմամբ այն բխում է հաճախորդների շահերից:

Եթե Ներդրումային ընկերությունը իր հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում

նախապատվությունը տրվում է հաճախորդին՝ բացառությամբ, եթե ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Պարտականություններ և կատարման գործոններ

Սույն Քաղաքականության կատարման ապահովումը դրված է Ներդրումային ընկերության բոլոր ներդրումային ծառայություն մատուցողների վրա՝ բրոքեր, դիլեր և փաթեթի կառավարիչ:

Ներդրումային ընկերությունն ապահովում է սույն Քաղաքականության կատարումը արժեթղթերի բոլոր տեսակների վրա՝ միաժամանակ հաշվի առնելով համապատասխան արժեթղթի հետ կապված շուկայում տիրող իրավիճակը և այլ հանգամանքներ, որոնք Ներդրումային ընկերության կարծիքով անհրաժեշտ են Հաճախորդի համար լավագույն պայմաններով պատվերի կատարման համար:

Քաղաքականության կատարման վերահսկողությունը

Սույն Քաղաքականության կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ներդրումային ընկերության Գլխավոր տնօրենի: